ԴԻՄԱԿՆԵՐԸ ՎԱ՛Ր

Ողորմելի յօդուածագիրը, դու որ «Ալիք» թիւ 196—ի ծալքերում ջալլամի գլուխդ ու խելքդ թաղած սոփեստութիւններ բաբբաջելով փնտռում ես «զարշապար համբուրող դիմակաւոր, ներքինը թաքցնող եւ արտաքինը ցուցադրող խրտուիլակ, առնականութիւնը կորցրած ճիւաղ, սինը՝քոր մի սողուն» նայիր քեզ հայելու մէջ և տես քեզ առանց դիմակի ու լսիր խօսքս՝

«Ի՞նչ մեղք ունի հայելին
«Եթէ զզուես նայելիս։»

Քեզնից ու քո համախոհներից կատարելագործուած դիմակաւորները չը կան աշխարհի վրայ։

Չ՛ես հաւատում։ Մենք կը տանք փաստեր։ Մենք քեզ պէս օդի մէջ անորոշ պղպջակներ չե՛նք արձակի, այլ կ՛ցուցնենք շռնթալից ատոմական տեսակներ։ Կը փոշմանէք։ բայց ուշ կը լինի։

Ե՛րանի թէ ճշմարտութիւնը լաւութեամբ ընդունելու գէթ ունակութիւնն ունենայիք։

Դիմակները վա՛ր։ Պատասխանեցէք որպէսզի սահմռկեցուցիչ փաստեր ստանաք.—

1—Դրօի և իր ընկերների համագործակցութիւնը սո՞ւտ է եղել հայ ազգի արիւնռուշտ թշնամի ֆաշիստ հիտլերականների հետ։

2—Այս իսկ երկրում Մայերների և Գամօթանների ստոր համագործակիցները չ՛են եղել ձեր ընկերները;

Եւ այժմ այսքան։ Պատասխանեցէք դիմակակրութեան դոկտոր—պրոֆեսոր Տիգրանեան, որպէսզի համոզեցուցիչ տեսակների առաջ շատէք։

Հ. Գ.

VERATSNUND | August 14, 1945